# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
գ. Սարչապետ, Հեռ. (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

N 995-19
*30 սեպտեմբեր 2019թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից Ձեզ ենք ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 503-Ա որոշումը և աշխատակազմի քարտուղարի թիվ 37 հրամանը:

Առդիր՝2 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

*Կատ.* ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 503

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետով, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Սեվրեն Աշոտի Գևորգյանի, Լուսիկ Ժորայի Գևորգյանի, Աննա Սեվրենի Գևորգյանի և Աշոտ Սեվրենի Գևորգյանի դիմումը հողամասից հրաժարվելու վերաբերյալ, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 787138 վկայականը

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1. Քաղաքացիներ Սեվրեն Աշոտի Գևորգյանին, Լուսիկ Ժորայի Գևորգյանին, Աննա Սեվրենի Գևորգյանին և Աշոտ Սեվրենի Գևորգյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-092-111-9 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 2.8 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության /խոտհարք/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին ՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 30
գ.Սարչապետ